

ԽՈՐՀՐԴԻ 1978 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՐԱՀԱՆԳ

Սոցիալական ապահովության հարցերում կանանց և տղամարդկանց միջև հավասար վերաբերմունքի սկզբունքի աստիճանական իրականացման մասին (79/7/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 235-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Խորհրդի 1976 թվականի փետրվարի 9-ի 76/207/ԵՏՀ հրահանգի աշխատանքի հասանելիության, մասնագիտական վերապատրաստման և առաջխաղացման, ինչպես նաև աշխատանքային պայմանների առումով կանանց և տղամարդկանց միջև հավասար իրավունքի սկզբունքի կիրառման մասին 1(2) հոդվածով սահմանվում է, որ նպատակ ունենալով ապահովելու կանանց և տղամարդկանց միջև հավասար վերաբերմունքի սկզբունքի աստիճանական իրականացումը սոցիալական ապահովության հարցերում, Խորհուրդը, գործելով Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա, կընդունի դրույթներ, որոնք սահմանում են դրա առարկան, գործողության շրջանակը և կիրառության պայմանավորվածությունները, և քանի որ Պայմանագրով այդ նպատակով հատուկ իրավասություններ չեն վերապահվում,

քանի որ սոցիալական ապահովության հարցերում հավասար վերաբերմունքի սկզբունքը նախ և առաջ պետք է կիրառվի կանոնադրական համակարգերում, որոնք հիվանդության, հաշմանդամության, ծերության, աշխատավայրում պատահարների, մասնագիտական հիվանդությունների և գործազրկության ռիսկերի պաշտպանություն են տրամադրում և այն պետք է կիրառվի սոցիալական օժանդակության հարցերում, եթե նման օժանդակությամբ լրացվում կամ փոխարինվում են վերոնշյալ համակարգերով,

քանի որ սոցիալական ապահովության հարցերով հավասար վերաբերմունքի սկզբունքի իրականացումը չի հակասում ծննդաբերության և հղիության հիմքով կանանց պաշտպանությանը վերաբերող դրույթներին, և քանի որ այս առումով անդամ պետությունները հնարավոր է, որ ընդունեն հատուկ դրույթներ կանանց համար՝ վերացնելու համար անհավասար վերաբերմունքի գոյություն ունեցող դեպքերը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն Հրահանգի նպատակը սոցիալական ապահովության ոլորտում կանանց և տղամարդկանց միջև հավասար վերաբերմունքի սկզբունքի և 3-րդ հոդվածում սահմանված սոցիալական պաշտպանության այլ տարրերի աստիճանական իրականացումն է՝ կապված սոցիալական ապահովության խնդիրների հետ, այսուհետ՝ «հավասար վերաբերմունքի սկզբունք»:

Հոդված 2

Սույն Հրահանգը կիրառվում է աշխատող հանրության, այդ թվում՝ ինքնազբաղ մարդկանց, աշխատողների և հիվանդության, դժբախտ պատահարի կամ պարտադրված գործազրկության պատճառներով աշխատանքն ընդհատած ինքնազբաղ անձանց նկատմամբ, աշխատանք փնտրող անձանց, ինչպես նաև թոշակի անցած կամ հաշմանդամ դարձած աշխատողների և ինքնազբաղ այլ անձանց նկատմամբ:

Հոդված 3

1. Սույն Հրահանգը կիրառվում է հետևյալի նկատմամբ. ա) կանոնադրական համակարգեր, որոնք պաշտպանություն են տրամադրում հետևյալ ռիսկերից՝

- հիվանդություն.
- հաշմանդամություն.
- ծերություն.
- աշխատավայրում դժբախտ պատահարներ և մասնագիտական հիվանդություններ.
- գործազրկություն.

բ) սոցիալական օժանդակություն, եթե նման օժանդակությունը լրացնում կամ փոխարինում է (ա) կետում նշված համակարգերին:

2. Սույն Հրահանգը չի վերաբերում մահացածների կամ ընտանիքը կերակրողների կորստի համար տրվող նպաստների մասին դրույթներին: Այն չի վերաբերում նաև ընտանեկան նպաստներին: Բացառություն են կազմում այն ընտանեկան նպաստները, որոնք տրվում են, որպեսզի մեծացնեն 1(ա) պարբերությամբ նշված ռիսկերի համար տրվող նպաստները:

3. Մասնագիտական նպաստների համակարգում հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրառումն ապահովելու նպատակով՝ Խորհուրդը, գործելով Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա, կրնդունի այնպիսի դրույթներ, որոնք սահմանում են նրա առարկան, գործողության շրջանակը և կիրառության պայմանավորվածությունները:

1) ՊՏ թիվ C 34, 11.02.1977 թ., էջ 3:

2) ՊՏ թիվ C 299, 12.12.1977 թ., էջ 13:

3) ՊՏ թիվ C 180, 28.07.1977թ., էջ 36: 4) ՊՏ թիվ L 39, 14.02.1976 թ., էջ 40:

Հոդված 4

1. Հավասար վերաբերմունքի սկզբունքը նշանակում է, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ձևի խտրականություն չպետք է գոյություն ունենա սեռական

պատկանելության հիմքով, մասնավորապես, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակի առնչությամբ, ինչը վերաբերում է՝

- համակարգերի գործողության շրջանակին և դրանց հասանելիության պայմաններին.

- նպաստ տալու պարտավորությանը և նպաստների հաշվարկմանը.

- արտոնությունների հաշվարկմանը, մասնավորապես, ամուսիններից մեկի և խնամքի տակ գտնվող անձանց տրվող արտոնությունների ընդլայնմանը, ինչպես նաև արտոնությունների իրավունքի երկարաձգումը կամ պահպանումը կարգավորող պայմաններին:

2. Հավասար վերաբերմունքի սկզբունքը չի հակասում այն դրույթներին, որոնք վերաբերում են կանանց պաշտպանությանը հղիության կամ ծննդաբերության հիմքով:

Հոդված 5

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ հավասար վերաբերմունքի սկզբունքին հակասող բոլոր իրավական նորմերը, կանոնակարգերն ու վարչական ակտերը չեղյալ հայտարարվեն:

Հոդված 6

Անդամ պետություններն իրենց ազգային իրավական համակարգերում ներմուծում են այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու, որ բոլոր այն անձինք, ովքեր համարում են, որ իրենք տուժել են հավասար վերաբերմունքի սկզբունք չկիրառելու հետևանքով, կարող են դատական ընթացակարգով գործ հարուցել մյուս իրավասու մարմիններին դիմելուց հետո:

Հոդված 7

1. Սույն Հրահանգը չի հակասում անդամ պետությունների իրավունքին իր գործողության շրջանակից բացառելու հետևյալը՝

ա) անձի իրավասութեկտության տարիքի սահմանում՝ ծերության ու աշխատանքային թոշակներ տրամադրելու և այլ արտոնությունների վրա դրա հնարավոր հետևանքների նպատակով.

բ) ծերության թոշակներ տրամադրելու համար արտոնություններ, որոնք տրամադրվում են այն անձանց, ովքեր երեխա են խնամում. արտոնությունների իրավունքների ձեռքբերում աշխատանքից աշխատանք ընկած միջանկյալ ժամանակահատվածում, որը կապված է երեխաների խնամքի հետ.

գ) ծերության կամ հաշմանդամության արտոնությունների իրավունքների տրամադրում կնոջ իրավունքների փոխանցման շնորհիվ.

դ) երկարաժամկետ հաշմանդամության, ծերության, աշխատանքի պատահարների և մասնագիտական հիվանդության արտոնությունների ավելացում՝ խնամքի տակ գտնվող կնոջ համար.

ե) նախքան սույն Հրահանգի ընդունումը՝ կանոնադրական համակարգի համաձայն իրավունքներ չստանալու կամ պարտավորություններ չստանձնելու այլընտրանքի իրավունքի իրականացման հետևանքները:

2. Անդամ պետությունները պարբերաբար ուսումնասիրում են 1-ին պարբերությունից բացառված հարցերն այդ հարցերի հետ կապված սոցիալական զարգացումների համատեքստում՝ որոշելու համար, թե արդյոք նման բացառումների պահպանումը հիմնավորված է:

Հոդված 8

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի պահանջները կատարելու համար անհրաժեշտ իրավական ակտերը, կանոնակարգերը և վարչական ակտերը գործողության մեջ են դնում դրա մասին ծանուցելուց հետո վեց տարվա ընթացքում: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում օրենքների, կանոնակարգերի կամ վարչական ակտերի տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում՝ ներառյալ 7 (2) հոդվածի համաձայն ընդունված միջոցները:

Նրանք տեղեկացնում են Հանձնաժողովին 7 (1) հոդվածում նշված հարցերի մասին գործող դրույթները պահպանելու պատճառների և ավելի ուշ դրանք վերանայելու հնարավորությունների մասին:

Հոդված 9

Սույն Հրահանգի ծանուցումից հետո յոթ տարվա ընթացքում անդամ պետությունները անհրաժեշտ բոլոր տեղեկություններն ուղարկում են Հանձնաժողով, որպեսզի վերջինս հաշվետվություն կազմի սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ, որը պետք է ներկայացվի Խորհուրդ: Հանձնաժողովը նաև առաջարկում է այլ միջոցներ, որոնք հավասար վերաբերմունքի սկզբունքն իրականացնելու համար կարող են անհրաժեշտ լինել:

Հոդված 10

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 1978 թվականի դեկտեմբերի 19-ին: